

Փոստ անել որտեղ աշխատողները կարող են դյուրությամբ կարդալ
Օրինախախտները կարող են տուգանքների ենթարկվել

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՆԿԱԶԱԳՈՒՅՆ ԺԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄԻ ՍԱԿ

\$ 10.50 ժամական

Փասադինայում

Սկսման թվական.- 1 Հուլիս, 2016

1 Հուլիս, 2016ից սկսյալ 26 կամ ավելի աշխատավորով գործատերերը կամ գործատեղիները պարտաւոր են ժամական առնվազն 10.50 տոլար սակ վճարել իրանց աշխատողներին (անկախ նրանց ստացած TIPS-ից):

Փասատինա քաղաքի այս «Նվազագույն Ժամական Սակ»ի հրամանագիրը ի գորու է չափահաս ու անչափահաս (դպրոցական տարիքի) աշխատողներին, որոնք շաբաթական երկու ժամ կամ ավելի կը գործեն մի աշխատատեղի մոտ Փասատինայում:

Նոր օրինագծի հիմամբ աշխատողները քաղաքի նվազագույն աշխատավարձի իրավունքները պաշտպանելու համար չեն կարող վրեժխնդրության ենթակայ լինել: Աշխատողները կարող են քաղաքացիական հայց բանալ ընդդեմ իրենց գործատերերի նկատմամբ եթէ այս որոշումը կը խախտեն. կամ կարող են գանգատի դիմել քաղաքի City's Department of Planning and Community Development-ի մօտ: Քաղաքը կհետաքննի հնարավոր խախտումները եւ, անհրաժեշտության դեպքում, կստանա աշխատավարձի գրառումները, ինչպես նախատեսված է օրենքով, հնարավորին չափով կբացահայտի խախտումները ու նվազագույն աշխատավարձի պահանջների պատվեր կվերականգնի աշխատողներին վճարումը ճիշդ կատարելու ու գանոնք գործից արձակումի պարագային գործատերին տուգանելով ու պարտադրելով անոնց ետ գործի առնելը: Բացի այդ, ցանկացած բիզնես, որ խախտում է դրույթները Փասադինայի սահմանված նվազագույն աշխատավարձի այս որոշմանը՝ ենթակա է քրեական հետապնդման:

Փասատինայի նոր նվազագույն աշխատավարձի կանոնները հաստատվել են նախքան Կալիֆորնիա նահանգի կողմից նման որոշում առնելը, որը ընթացքի մեջ է: Թէեւ նահանգի օրինագիծի հետ ընդհանրություններ կան, կան նաեւ տարբեր պահանջներ: Եթէ այս մասին հարց ունեք կամ հավելյալ մանրամասնությունների կկարոտ եք, կամ ձեզ թվում է որ ճիշդ չեք վճարվում ձեր աշխատանքի դիմաց՝ հաճեցեք կապ հաստատել ձեր գործատերի կամ Փասատինա քաղաքի գրասենյակին հետ դիմելով:-

City of Pasadena

Department of Planning and Community Development

Minimum Wage Enforcement

Code Compliance Manager Jon Pollard

(626) 744-6831

Email: jpollard@cityofpasadena.net

Website: www.cityofpasadena.net/MinimumWage

Գործատերերը պատասխանատու են թարգմանելու այս ծանուցումը այն լեզուներով, որոնք իրենց աշխատողների 5% կամ ավելիի խօսակցական լեզուն է: